



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2020

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՍ 145

### ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիտի փառաբանեմ քեզ, իմ թագաւոր Աստուածս,  
 քու անունդ պիտի օրհնաբանեմ յաւիտեանէ յաւիտեան:  
 Պիտի օրհնաբանեմ քեզ ամէն օր:  
 Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի.  
 անչափելի է անոր մեծութիւնը:  
 Բոլոր սերունդները պիտի գովաբանեն ըրածներդ, Տէր,  
 պիտի պատմեն հզօր գործերդ:  
 Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերատար եւ սիրով լեցուն:  
 Բոլորին հանդէպ բարեհան է Տէրը,  
 իր գթութիւնը կը տարածէ իր բոլոր արարածներուն վրայ:  
 Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,  
 եւ տէրութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:  
 Տէրը հաւատարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,  
 նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:  
 Տէրը արդար է իր վարմունքին մէջ,  
 Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,  
 բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:  
 Անհկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,  
 անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:  
 Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,  
 մինչ կորուստի կը մատնէ բոլոր ամբարիշտները:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



## ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ 2:46-49 ԳԼԽ

### ԹԱԳԱՒՈՐԸ ԿԸ ՎԱՐՉԱՏՐԷ ԴԱՆԻԷԼԸ 2:46-49

Կացութիւններն ու պարագաները երբեք ալ արգելք չեն ու պէտք չէ ըլլան մեր կապն ու հաւաքը պահելու առ Աստուած: Այո, հոգ չէ թէ հեռու են Երուսաղէմէն, հոգ չէ թէ ազգայութեան մէջ չեն, այլ՝ սարուկ, բայց իր եւ իրենց, այս պարագային Դանիէլ եւ իր ընկերները, հաւաքը պահեցին եւ առաւել եւս առիթ եղաւ նաեւ իրենց հաւաքը փոխանցելու ուրիշին, այս անգամ թագաւորին: Միւս կողմէ Աստուծոյ գործելակերպը, թէ ինչպիսի պարագաներ կը սպեղծէ, որպէսզի հրաւիրէ մարդը գիտակցութեան, աստուածաճանաչողութեան: Հակառակ անոր, որ գերի են փարուած Բաբելոն, բայց կ'արժանանան այնպիսի պարփոյի, որ նոյնիսկ ազապ մարդը չունի այդ պարփուր: Խորքին մէջ իսկական գերին ոչ թէ Դանիէլն է, այլ նոյնինքն Նաբուգոդոնոսոր թագաւորը: Ան որ Աստուծոյ կ'ապաւինի կ'ունենայ այնպիսի վստահութիւն մը, խաղաղութիւն մը, նոյնիսկ եթէ գերութեան, հիւանդութեան կամ այլ ուրիշ դժուարին պայմաններու մէջ է, որովհետեւ նոյնիսկ այդ պարագաները, բարիին գործակից կրնան դառնալ:

Ահա Դանիէլ պարմել է ու բացապրել է երբ Նաբուգոդոնոսորին փեսած երազը, Նաբուգոդոնոսորը «Երեսի վրայ ինկաւ եւ Դանիէլին երկրպագութիւն ըրաւ» 46 հմր: Այսպէղ ցոյց կու փայ մարգարէութեան գործիւնը, ինչ որ Պողոզ Առաքեալ երբ կը գրէ Կորնթացիներուն Սուրբ Հոգիի շնորհներու մասին, շեշտը կը դնէ մարգարութեան վրայ քան լեզուներ խօսելու, որովհետեւ մարգարէութեան մէջ դարձի գալու երեւոյթը կայ, այնպէս ինչպէս Նաբուգոդոնոսորի պարագան: Ան անմիջապէս սկսաւ դաւանիլ եւ ընդունիլ ըսելով. «Իրաւցնէ ձեր Աստուածը ինքն է աստուածներու Աստուածը եւ թագաւորներուն՝ Տէրը ու գաղտնիքները յայտնողը» 47 հմր:

Ահա Դանիէլ կը մեծարուի եւ կը դառնայ կառավարիչ, բայց այս բոլորին մէջ Դանիէլը գիտէ ու Աստուծոյ առաջնորդութեամբ է որ այս բոլորը կը պատահին, նոյնիսկ նեղութեան եւ գերութեան մէջ Դանիէլ կ'ապաւինի Աստուծոյ, որովհետեւ սիրով կ'ապուած է Աստուծոյ, սէր մը, որ ամէն ինչ կը յաղթահարէ: Տակաւին, Դանիէլ նաեւ չի մոռնար իր ընկերները, որոնք միասին աղօթեցին, միասին խնդրեցին Աստուծմէ, որ յայտնէ այս երազին իմաստը, եւ թագաւորէն կը խնդրէ որ անոնք ալ նշանակուին պաշտօնի: Այսպէղ հարցը պաշտօնը չէ, այլ որքան պաշտօնի ճամբով առիթը վկայութիւն փայլու ճշմարիտ Աստուծոյ մասին հեթանոս աշխարհին: Ի վերջոյ, Դանիէլ թագաւորինմ դուռը կը մնար, այս արքայապարտիւնը հեքաքրքրական որ կ'ուզէ ըսել, որ Դանիէլ մնայուն աղօթքի փրամաղրութեան մէջ էր, որովհետեւ աղօթքը նաեւ դուռն է առ Աստուած, երկնաւոր թագաւորին դուռը, անկէ ներս մտնելու ու Անոր սէրը, ողորմութիւնն ու խաղաղութիւնը վայելելու: